Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն 3

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքին աուդիտի կոմիտեի նիստի

07.10.2013թ.
ժ. 11.00

ք. Երևան
ՀՀ ԱՍՀՆ նիստերի դահլիճ

Մասնակցում էին՝
Կոմիտեի նախագահ՝ Ա. Ասատրյանը
Կոմիտեի անդամներ՝ Ա. Պետրոսյանը, Ֆ. Բերիկյանը, Ս. Հարությունյանը, Ս. Տերտերյանը.

Բացակայում էին՝ Ջ. Բաղդասարյանը, Ա. Գրիգորյանը,
Հրավիրված էին՝ Լ. Ղազարյանը, Թ. Ավետիսյանը, Լ. Ղարիբյանը, Դ. Հակոբյանը, Վ. Զուրաբյանը, Ա. Մանվելյանը, Ա. Բարսեղյանը
«Հայ օգնության միություն» ՀԿ-ից Ա. Մնացականյանը, Ն. Հովսեփյանը, Ն. Գալստյանը, Տ. Ասատրյանը

Նիստը բացման խոսքով սկսեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, կոմիտեի նախագահ Ա. Ասատրյանը՝ առաջարկելով հաստատել ներքին աուդիտի կոմիտեի նիստի օրակարգը: Ներքին աուդիտի կոմիտեն միաձայն **ՈՐՈՇԵՑ** հաստատել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքին աուդիտի կոմիտեի 2013 թվականի հոկտեմբերի 7-ի նիստի հետևյալ օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքին աուդիտի կոմիտեի 07.10.2013թ. նիստի

1. Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 04 խմբի, 01 դասի «16. ՀՀ մանկատների շրջանավարտներին կրթաթոշակի և միանվագ դրամական օգնության տրամադրում» ծրագրի աուդիտորական հաշվետվությունում արձանագրված խախտումների և ներկայացված առաջարկությունների մասին:

(Զեկուցող ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Ս. Տերտերյան)

2. Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 04 խմբի, 01 դասի «04. ՀՀ մանկատների շրջանավարտներին աջակցություն և խորհրդատվություն» ծրագրի աուդիտորական հաշվետվությունում արձանագրված խախտումների և ներկայացված առաջարկությունների մասին:

(Զեկուցող ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Ս. Տերտերյան)

3. Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 04 խմբի, 01 դասի «14.Հայաստանի Հանրապետությունում խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրման ծառայություններ» ծրագրի աուդիտորական հաշվետվությունում արձանագրված խախտումների և ներկայացված առաջարկությունների մասին:

(Զեկուցող ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Ս. Տերտերյան)

1. Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 04 խմբի, 01 դասի «16. ՀՀ մանկատների շրջանավարտներին կրթաթոշակի և միանվագ դրամական օգնության տրամադրում» ծրագրի աուդիտորական հաշվետվությունում արձանագրված խախտումների և ներկայացված առաջարկությունների մասին:

(Ա. Ասատրյան, Ա. Պետրոսյան, Ֆ. Բերիկյան, Ս. Հարությունյան, Ս. Տերտերյան, Լ. Ղազարյան, Ա. Մանվելյան)

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց Ս. Տերտերյանը՝ անդրադառնալով «ՀՀ մանկատների շրջանավարտներին կրթաթոշակի և միանվագ դրամական օգնության տրամադրում» ծրագրի շրջանակներում 2012 թվականի փետրվարի 16-ին՝ ՀՀ ԱՍՀՆ և «Հայ օգնության միություն» հասարակական, բարեգործական կազմակերպության միջև կնքված պայմանագրում, ինչպես նաև «ՀՀ մանկատների շրջանավարտներին կրթաթոշակի և միանվագ դրամական օգնության տրամադրում» ծրագրի գործընթացը կարգավորող՝ ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի «Մանկատան (անկախ դրա կազմակերպական-իրավական ձևից)

շրջանավարտներին միանվագ դրամական օգնության տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 158-Ն որոշմամբ հաստատված կարգի ուսումնասիրության արդյունքում բացահայտված մի շարք թերություններին, մասնավորապես,

ա/ ներկայումս գործող ֆինանսավորման ձևաչափը չի համապատասխանում Կարգի 2-րդ կետով սահմանված ձևաչափին,

բ/ Կարգի 3-րդ կետով սահմանված տեղեկությունները մանկատները Նախարարություն չեն ներկայացնում,

գ/ համաձայն Կարգի 5-րդ կետի՝ Նախարարությունը դրամական օգնության գումարը սահմանված կարգով պետք է փոխանցեր մանկատների հաշվարկային հաշիվներին, սակայն ներկայումս Նախարարությունը գումարը փոխանցում է ՀԿ-ին, որն էլ իր հերթին այդ գումարը փոխանցում է մանկատների հաշվարկային հաշիվներին:

Ա. Ասատրյանը նկատեց, որ ներքին աուդիտի բաժնի կողմից արձանագրված թերությունները հարկավոր է կարճ ժամանակահատվածում շտկել, իսկ Լ. Ղազարյանին հետևողական լինել իրավական ակտերի հստակ կիրառմանը և անհրաժեշտության դեպքում վարչության կողմից դրանք վերանայվեն, համապատասխանեցնելով արդի իրողությանը:

Ս. Տերտերյանի կողմից ներկայացված ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ արտահայտվեցին նաև Ա. Պետրոսյանը, Ֆ. Բերիկյանը, Ս. Հարությունյանը և Լ. Ղազարյանը:

Քննարկման արդյունքում ներքին աուդիտի կոմիտեն միաձայն **ՈՐՈՇԵՑ**.

1. Մշակել և նախարարի հաստատմանը ներկայացնել գործողությունների ծրագիր (ժամանակացույց)՝ «ՀՀ մանկատների շրջանավարտներին կրթաթոշակի և միանվագ դրամական օգնության տրամադրում» ծրագրի ներքին աուդիտի ընթացքում բացահայտված թերությունների և խախտումների շտկման կապակցությամբ:

Կատարող՝ ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետ Լ. Ղազարյան ժամկետ՝ 3 օր

2. Կառավարության որոշման նախագիծ մշակել մանկատան շրջանավարտների տան վարձակալության, կամ սոցիալական բնակարան հատկացնելու վերաբերյալ, նշելով անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը որոնք պետք է ներկայացվեն շրջանավարտների կողմից:

Կատարող՝ ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետ Լ. Ղազարյան ժամկետ՝ 1 ամիս

3. Քննարկման արդյունքում ներքին աուդիտի կոմիտեի կողմից ընդունված որոշումների կատարման գործընթացի հսկողությունը վերապահել Ս. Տերտերյանին:

Կատարող՝ ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Ս. Տերտերյան ժամկետ՝ 1 ամիս

2. Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 04 խմբի, 01 դասի «04. ՀՀ մանկատների շրջանավարտներին աջակցություն և խորհրդատվություն» ծրագրի աուդիտորական հաշվետվությունում արձանագրված խախտումների և ներկայացված առաջարկությունների մասին:

(Ա. Ասատրյան, Ֆ.Բերիկյան, Ս. Հարությունյան, Ս. Տերտերյան, Լ.Ղազարյան, Ա. Մանվելյան, Ա. Թանաշյան, Վ. Զոհրաբյան)

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց Ս. Տերտերյանը՝ անդրադառնալով «ՀՀ մանկատների շրջանավարտներին աջակցություն և խորհրդատվություն» ծրագրի շրջանակներում 2012 թվականի փետրվարի 16-ին՝ ՀՀ ԱՍՀՆ և «Հայ օգնության միություն» հասարակական, բարեգործական կազմակերպություն միջև կնքված պայմանագրում բացայտված մի շարք թերություններին:

Ս Տերտերյանը ներկա գտնվողների ուշադրությունը հրավիրեց այն հարցին, որ պատասխանատու ստորաբաժանման կողմից պահանջվող փաստաթղթերը ամբողջությամբ չէր ներկայացվել աշխատանքային խմբին:

Ա. Ասատրյանի կողմից **հանձնարարվեց՝** ներքին աուդիտի բաժնին հստակեցնել թե որ փաստաթղթերը չեն ներկայացվել աուդիտ իրականացնելու համար և զեկուցել այդ մասին սահմանված ժամկետում, որպեսզի ամբողջական պատկեր լինի ծրագրի կատարման հետ կապված, իսկ Լ. Ղազարյանին պահանջված փաստաթղթերը ներկայացնել ներքին աուդիտի բաժին:

Շարունակելով Ս. Տերտերյանը ներկայացրեց «ՀՀ մանկատների շրջանավարտներին աջակցություն և խորհրդատվություն» ծրագրի գործընթացը կարգավորող՝ ՀՀ կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 30-ի ««Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետությունում մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված ծրագրի ուսումնասիրության արդյունքում բացահայտված մի շարք թերություններին:

Ա. Ասատրյանը հատուկ ուշադրությունը հրավիրեց հետևյալ հարցերին՝

ա/ մանկատան շրջանավարտների բնակարանների վարձակալության կամ սոցիալական բնակարաններ տրամադրելու խնդիրներին, և

բ/ զբաղվածության տարածքային կենտրոնների միջոցով մանկատան շրջանավարտների զբաղվածության խնդրի կարգավորմանը:

Բացայտված մի շարք տարաբնույթ խախտումների և թերությունների վերաբերյալ արտահայտվեցին Ա. Ասատրյանը, Ֆ. Բերիկյանը, Ս. Հարությունյանը, Լ. Ղազարյանը և Ա. Թանաշյանը:

Ավարտելով Օրակարգի 2-րդ հարցը, Ս. Տերտերյանը պատասխանեց Ս. Հարությունյանի և Դ. Հակոբյանի հարցերին:

Քննարկման արդյունքում ներքին աուդիտի կոմիտեն միաձայն **ՈՐՈՇԵՑ**.

1. Մշակել և նախարարի հաստատմանը ներկայացնել գործողությունների ծրագիր (ժամանակացույց)՝ «ՀՀ մանկատների շրջանավարտներին աջակցություն և խորհրդատվություն» ծրագրի ներքին աուդիտի ընթացքում բացահայտված թերությունների և խախտումների շտկման կապակցությամբ:

Կատարող՝ ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետ Լ. Ղազարյան **ժամկետ՝ 3 օր**

2. Քննարկման արդյունքում ներքին աուդիտի կոմիտեի կողմից ընդունված որոշումների կատարման գործընթացի հսկողությունը վերապահել Ս. Տերտերյանին:

Կատարող՝ ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Ս. Տերտերյան **ժամկետ՝ 3 օր**

3. Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 04 խմբի, 01 դասի «16. Հայաստանի Հանրապետությունում խնամատար ընտանիքների ինստիտուտի ներդրման ծառայություններ» ծրագրի աուդիտորական հաշվետվությունում արձանագրված խախտումների և ներկայացված առաջարկությունների մասին:

(Ա. Ասատրյան, Ֆ.Բերիկյան, Ս. Հարությունյան, Ս. Տերտերյան, Լ.Ղազարյան, Ա. Թանաշյան)

Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց Ս. Տերտերյանը՝ անդրադառնալով «Հայաստանի Հանրապետությունում խնամատար ընտանիքների ինստիտուտի ներդրման ծառայություններ» ծրագրի շրջանակներում՝ 2012 թվականի ժամանակահատվածում, խնամատար ընտանիք երեխային դաստիարակության հանձնելու մասին պայմանագրերում բացայտված մի շարք թերություններին:

Ս. Տերտերյանը նշեց, որ անհրաժեշտ է ծրագրի անվանումը փոխել, քանի որ այն գործում է 2005 թվականից և որպես ներդրվող ծրագիր այն անվանելը ճիշտ չէ:

Ա.Ասատրյանը հատուկ ուշադրությունը հրավիրեց հետևյալ հարցերին՝

ա/ որն է ծրագրի խնդիրը,

բ/ գոյություն ունի արդյոք խնամատար ծնող դառնալու ցանկություն հայտնած քաղաքացիների կենտրոնացված հաշվառում և խնամատար ընտանիքների հաշվառման կարգ,

գ/ երեխաների խնամատար ընտանիք ուղեգրելու համար որոշակի տարիքային սահմանափակում:

Ա. Ասատրյանի հարցադրումներին պատասխանեցին Ֆ.Բերիկյանը և Լ. Ղազարյանը:

Շարունակելով Ս. Տերտերյանը ներկայացրեց «Հայաստանի Հանրապետությունում խնամատար ընտանիքների ինստիտուտի ներդրման ծառայություններ» ծրագրի գործընթացը կարգավորող իրավական ակտերի պահանջների ուսումնասիրության արդյունքները, մասնավորապես՝

ա/ ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 8-ի <Երեխային խնամատար ընտանիք հանձնելու կարգը, յուրաքանչյուր երեխայի պահելու համար խնամատար ընտանիքին ամսական վճարվող դրամական միջոցների և երեխայի խնամքի և դաստիարակության համար ծնողների վարձատրության վճարման կարգն ու չափը և խնամատար ընտանիք երեխային դաստիարակության հանձնելու մասին պայմանագրի ձևը հաստատելու մասին> թիվ 459-Ն որոշմանը,

բ/ ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի <Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի թիվ 922-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին> թիվ 164-Ն որոշմանը:

Ա. Ասատրյանը **հանձնարարեց,** որ պետք է հստակ նշվի չափորոշիչներ, որոնք պետք է կարգավորեն խնամատար ընտանիքների հաշվառումը: Նշեց նաև, որ ինտեգրված սոցիալական ծառայությունները և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը մի համակարգ է, իսկ պետությունը սոցիալական աշխատողին դեպքը վարելու համար վարձատրելու է:

Ավարտելով Օրակարգի 3-րդ հարցը, Ս. Տերտերյանը պատասխանեց Ս. Հարությունյանի հարցերին:

Քննարկման արդյունքում ներքին աուդիտի կոմիտեն միաձայն **ՈՐՈՇԵՑ**.

1. Մշակել և նախարարի հաստատմանը ներկայացնել գործողությունների ծրագիր (ժամանակացույց)՝ «Հայաստանի Հանրապետությունում խնամատար ընտանիքների ինստիտուտի ներդրման ծառայություններ» ծրագրի ներքին աուդիտի ընթացքում բացահայտված թերությունների և խախտումների շտկման կապակցությամբ:

Կատարող՝ ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետ Լ. Ղազարյան **ժամկետ՝ 3 օր**

2. Քննարկման արդյունքում ներքին աուդիտի կոմիտեի կողմից ընդունված որոշումների կատարման գործընթացի հսկողությունը վերապահել Ս. Տերտերյանին:

Կատարող՝ ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Ս. Տերտերյան **ժամկետ՝ 3 օր**

Կոմիտեի նախագահ՝ Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

Կոմիտեի անդամներ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ֆ. ԲԵՐԻԿՅԱՆ

Ս. ՏԵՐՏԵՐՅԱՆ